ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՄՆ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

2015թ. մայիսի 7-ին Հայաստանի Հանրապետության կառավարության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության միջև ստորագրվել է առևտրի և ներդրումների շրջանակային Համաձայնագիրը: Համաձայնագրով հիմնվել է Հայաստան-ԱՄՆ առևտրի և ներդրումների հարցերով խորհուրդ, որը նախագահում են. հայկական կողմից՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, ամերիկյան կողմից՝ ԱՄՆ Առևտրի ներկայացուցչի գրասենյակը:

Խորհրդի նպատակներն են՝ առևտրային և ներդրումային հնարավորությունների ընդլայնումը և հնարավոր խոչընդոտների բացահայտումն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են մտավոր սեփականությունը, գործարար միջավայրը, աշխատողների իրավունքները, ինչպես նաև հարցեր, որոնք ներառված չեն երկրների միջև կնքված ներդրումային համաձայնագրում:

Խորհրդի առաջին հանդիպումը կայացել է 2015 թ. նոյեմբերի 17-ին՝ Երևանում, երկրորդ հանդիպումը՝ 2018թ. մարտի 19-ին՝ Վաշինգտոնում: Առաջիկայում նախատեսվում է անցկացնել Խորհրդի երրորդ հանդիպումը: